



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«22» սեպտեմբեր 2020թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 229-Ն

ԱՆԻ ՏԵՐ-ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ  
ՄԱՍՆԱԳԵՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով և 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N° 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ և 151-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N° 441-Ն որոշման հավելվածի 14-րդ կետն ու Անի Տեր-Մարկոսյանի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի դիմումը և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-24.2-Մ2-4) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2020 թվականի սեպտեմբերի 17-ին անցկացված մրցույթի հարցազրույցի մասնակցի վերաբերյալ եզրակացությունը (կցվում են)՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ .

1. Անի Տեր-Մարկոսյանին նշանակել Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության գլխավոր մասնագետ (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-24.2-Մ2-4)՝ 9 ամիս փորձաշրջանով:

2. Անի Տեր-Մարկոսյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 22-4-24.2-Մ2-1) Կատյա Միքայելի Մարտիրոսյանին:

3. Անի Տեր-Մարկոսյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել 212 309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) դրամ՝ համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

 Recoverable Signature

X 

---

ՄԻՔԱՅԵԼ ԶԱԼԻՆՅԱՆ

Signed by: ZALINYAN MIKAYEL 1310880573

ՄԻՔԱՅԵԼ ԶԱԼԻՆՅԱՆ